ՅՈՎՍԷՓ ՃԻԱԳՈԶԱ

# ԻՆՉՊԷՍ ՏԵՐԵՒՆԵՐԸ

ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ ՉՈՐՍ ՀԱՆԴԻՍՈՎ

(Շար. տես էջ 125)

## ՏԵՍԻԼ ՈՒԹԵՐՈՐԴ

ՅՈՒԼԻԱ, ԹՈՄԻ, *ետքը* ՆԷՆՆԷԼԷ, *ետքը* ԼՈՒՍԻԱ։

ՅՈՒԼԻԱ

*Պէտք է կարեկից ըլլալ, վասն զի գլուխը տկար է։ Եթէ խորհուրդներուս մտիկ ըրած ըլլար, այս բաներուս չէինք հասներ։*

ԹՈՄԻ

*Խորհուրդներո՞ւդ։*

ՅՈՒԼԻԱ

*Ես կը հասկնամ։ Կ'ուզէի գոնէ խնայել իրեն հիմա այս ծախքս։*

ԹՈՄԻ

*Ո՛հ։ Եթէ քեզի մնար, կը խնայէիր իրեն թէ՛ հիմա թէ ետքը։ Եթէ Լապլանչ տիկինը չի վազեր, Սիւիսէն ալ ստակի երբեք չէր տեսնար։*

ՅՈՒԼԻԱ

*Ա՛յնչափ դրամներ առաւ որ։ Նայէ որ այն ստակը հոն մնաց։*

ԹՈՄԻ

*Աղէկ գիտես որ իմս չէ։ Քեզի հաճոյք ընելու համար յանդիմանութիւնները կերայ։*

ՅՈՒԼԻԱ *թղթադրամը կ'առնէ։*

*Ըսել է որ ալ ինծի պարապական չես։ Ի՞նչ կը համարիս։ Ամէնուդ համար կը պահեմ արդէն։ Կարեւոր վայրկեանին զանոնք պիտի գտնաք։*

ԹՈՄԻ

*Բայց յայտնի է։*

ՅՈՒԼԻԱ

*Տասներկու հազար ֆրա՞նք վատնեցար։ Անցած օր ինծի վեց ըսած էիր։*

ԹՈՄԻ

*Վեցէն՝ ինծմէ հինգհարիւր խնդրեցիր։ Եթէ քեզի տասներկուք ըսած ըլլայի, հազար պիտի ուզէիր։ Աւելէ զատ, մեծագոյն մասը գնաց։ Ես ալ քանի մը հաշիւ ունէի հատուցանելու։*

ՅՈՒԼԻԱ

*Ամէ՞թ։*

ԹՈՄԻ

*Ամօ՞թ՝ պարտքերս հատուցանելուս համար։*

ՅՈՒԼԻԱ

*Խաղալուդ համար։*

ԹՈՄԻ

*Ե՛ս ալ այն կ'ուզէի ըսել։ Քիչ մը բարոյական խրատ։*

ՆԷՆՆԷԼԷ *ճաշարանին խորէն կը մտնայ։*

ՅՈՒԼԻԱ

*Հոս եկուր, հոս եկուր։ Հայրդ դու գնացիր կանչելու, ե՞հ։*

ՆԷՆՆԷԼԷ

*Այո՛։*

ՅՈՒԼԻԱ

*Ազուո՞ր բան։ Ետեւէս լրտեսութիւն կ'ընես։*

ԹՈՄԻ *մէջտեղը մտնալով։ Նէննէլէի։*

*Պատասխան մի տար։*

ԼՈՒՍԻԱ *մայր դռնէն կը մտնայ տոմսակով մը՝ զոր Յուլիայի կը յանձնէ։*

ՅՈՒԼԻԱ *կ'առնէ զայն, կը բանայ և փութով կը կարդայ։*

ԹՈՄԻ *վերաառացեալ գործերուն միջոց։ Նէննէլէի։*

*Եւ չե՞ս մտածեր որ քեզի համար ես հոս եմ։ Սուտհակ մը կրնամ ըլլալ, սակայն....*

ՆԷՆՆԷԼԷ

*Ինչու ա՞յդպէս կ'ըսես։*

ԹՈՄԻ

*Վասն զի ճշմարիտ է։*

ՅՈՒԼԻԱ *Լուսիայի։*

*Տոմսակներն անձա՞մբ ներկայացուցիր։*

ԼՈՒՍԻԱ

*Փիլիպպոս կոմսը դեռ կը քնանար։ Սենեկապան կնոջ տուի։ Սանդուղին վրայ պարոն Սարծանային հանդիպեցայ և ըսաւ որ կայարան պիտի երթար։ Տէր Միքայէլը ինքը նախասենեակը եկաւ այդ տոմսակը յանձնելու։ Հարցուց թէ ո՞ր ժամուն կը մեկնէիք։ Նա ալ կայարան պիտի գտնուի։*

ՅՈՒԼԻԱ

*Ծաղիկներ պիտի բերեն։*

ԼՈՒՍԻԱ

*Արդէն անդին են։ Ծառան հետս եկաւ։*

ՅՈՒԼԻԱ

*Գնա առ զանոնք։*

*Լուսիա կ'երթայ։ Յուլիա տոմսակը նորէն կը կարդայ։*

ԹՈՄԻ *կամացուկ Նէննէլէի։*

*Ճամբորդութեանը համար ծաղիկնե՜րը պակաս էին։*

digitised by A.R.A.R.@

ՆԷՆՆԷԼԷ ի. վ. Թամիի։

Ծաղկազարդելու աղուոր ճամբորդութիւն։

ԼՈՒՍԻԱ կը դառնայ ծաղիկներով։

ՅՈՒԼԻԱ զանոնք կ'առնէ։

Ո՜հ սիրուն են, սիրո՜ւն։

ՆԷՆՆԷԼԷ

Մայր, կրնա՞նք զոցել ներսը սենեակդ։

ՅՈՒԼԻԱ

Այո՛։ Լուսիան թող գայ։

Ծաղիկները Նէննէլէի կու տայ։

Ա՛ռ։ Տեղ մը դիր որ չայրուին։

ՆԷՆՆԷԼԷ բազմոցին վրայ կը նետէ զանոնք։

ՅՈՒԼԻԱ

Ի՞նչ կերպ է ատիկայ։

ՆԷՆՆԷԼԷ

Ո՞ւր պիտի դնէի։

ՅՈՒԼԻԱ կը նայի իրեն, յետոյ Լուսիային։

Հետս եկուր։

ՅՈՒԼԻԱ Նէննէլէի կը մօտենայ փայփայող։

Օրիորդ։

ՅՈՒԼԻԱ

Երթանք։

Լուսիայի հետ սենեակը կը մտնայ։

## ՏԵՍԻԼ ԻՆՆԵՐՈՐԴ

ՆԷՆՆԷԼԷ, ԹՈՄԻ, յետոյ ԱՆԴՐԷԱՍ, յետոյ ՄԱՔՍԻՄՈՍ։

ՆԷՆՆԷԼԷ

Խելքը այս բաներուս տալու բուն օրն է, այսօր։

ԹՈՄԻ

Ոչ։ Միւս երթալնուս համար պիտի չի մեռնինք։

ԱՆԴՐԷԱՍ մայր դռնէն։

Գասպարը բեռներով կրնա՞մ զրկել, յանձնելու համար։

ԹՈՄԻ

Իմ պայուսակնե՞րս։

ԱՆԴՐԷԱՍ

Գասպար զանոնք սանդղիկէն վար իջեցընել տուաւ։

ՆԷՆՆԷԼԷ

Ղրկէ զինքը։

ԱՆԴՐԷԱՍ

Գիտէ՞ք թէ պարոն Ռոզանին հասաւ.... եղբօրորդին։

ՆԷՆՆԷԼԷ

Մաքսիմո՞ս։ Ո՞ւր է։

ԱՆԴՐԷԱՍ

Հիմա պատուհանէն տեսայ որ պարտէզին մէջէն կ'անցնէր։

ՆԷՆՆԷԼԷ

Կառքը պատրա՞ստ է։

ԱՆԴՐԷԱՍ

Լծելու վրայ են։

ՄԱՔՍԻՄՈՍ մայր դռնէն։

Բարի լոյս։

Անդրէաս կ'երթայ։

ՆԷՆՆԷԼԷ

Ո՜հ Մաքսիմոս։ Ե՞րբ հասար։

ՄԱՔՍԻՄՈՍ

Այս առաւօտ եօթին, ուղղակի Պուտա Բեշտէն։ Բարի լոյս, Թովմաս։

ԹՈՄԻ

Սիրելի՛դ Մաքսիմոս։

ՄԱՔՍԻՄՈՍ

Դո՞ւն ալ կը մեկնիս։

ԹՈՄԻ

Այնպէս որոշուած չէ՞ր։

ՄԱՔՍԻՄՈՍ

Երբ, տասը օր կայ, ելայ գացի, հօրեղբայրս դեռ երկմիտ էր թէ արդեօք մինա՞կ գար թէ զձեզ ալ հետը տանէր։ Բայց հիմա բեռները տեսնալով՝ հասկցայ որ ամէնքնիդ ալ կու գաք։

ՆԷՆՆԷԼԷ

Շատ ենք է՞հ։

ՄԱՔՍԻՄՈՍ

Երրէ՞ք։ Աւելի լաւ է, աւելի լաւ։ Իսկ հօրեղբա՞յրս։

ԹՈՄԻ

Կանչեմ զինքը։

Յովհաննէսի դուռը կ'երթայ։

Հայր, Մաքսիմոսը հոս է։

ՄԱՔՍԻՄՈՍ Նէննէլէի։

Ի՞նչպէս է տրամադրութիւնը։ Ինքզինքը զգա՞ց քիչ մը։

ՆԷՆՆԷԼԷ

Հանդարտ է։

ՄԱՔՍԻՄՈՍ

Իսկ դո՞ւ։ — Կը ցաւի՞ս երթալուդ վրայ։

ՆԷՆՆԷԼԷ

Անհամբեր մեկնելու ժամուն կը սպասեմ։

ՄԱՔՍԻՄՈՍ

Այդ չըսեր։ Շատ կը ցաւի՞ս։

ՆԷՆՆԷԼԷ

Չէի ուզեր մնալ։

ՄԱՔՍԻՄՈՍ

Ուրիշ պատասխան մը որ պատասխան չէ։ Երկու եղբարց զաւակներ ենք, մէկմէկու հետ դուով կը խօսինք, երկուքնիդ ալ համե-

digitised by A.R.A.R.@

լի էք ինծի, բայց աշխարհք գալերնէս ի վեր, ընդամէնը երկու ժամ տեսնուած ենք անցած շաբաթ։

ԹՈՄԻ

Ես կը յիշեմ որ երբոր զքեզ տեսայ, տասնուերկու տարուան էիր։ Ձողի մը պէս երկայն բարակ բան մըն էիր։ Ես տասը տարուան էի և Նէննէլէ հինգ։

ՄԱՔՍԻՄՈՍ

Ես իրենէն ամենեւին չեմ յիշեր։

ՆԷՆՆԷԼԷ

Եւ ոչ ես զքեզ։

ՄԱՔՍԻՄՈՍ

Կը հասկցուի։ Թովմասը այո՛։ Զքեզ կ՚ատէի վասն զի իմինէս աւելի գեղեցիկ փողպատ մը ունէիր։

*ՆԷՆՆԷԼԷ նայելով իրեն։*

Հիմա կրկին կը հատուցանես։

ՄԱՔՍԻՄՈՍ

Փողպատներո՞վ։ Կարծեմ թէ չես հաւնիր փողպատներուս։

ՆԷՆՆԷԼԷ

Ինչո՛ւ։ Ամբողջ զգեստին հետ կը յարմարին։

ՄԱՔՍԻՄՈՍ

Ըսել է թէ ամբողջ զգեստիս չես հաւնիր։ Բայց չեմ փոխեր։

ԹՈՄԻ

Եւ իրաւունք ունիս։

## ՏԵՍԻԼ ՏԱՍՆԵՐՈՐԴ

ՅՈՎՀԱՆՆԷՍ և վերոյիշեալները, յետոյ ԱՆԴՐԷԱՍ։

*ՅՈՎՀԱՆՆԷՍ իրեն սենեկէն կու գայ*

Մաքսիմոս։

ՄԱՔՍԻՄՈՍ

Հօրեղբայր։

*Կը գրկուին։*

ՅՈՎՀԱՆՆԷՍ

Շատ աղէկ եմ, երբոր զքեզ քովս կը տեսնամ։

*Նէննէլէի և Թոմիի։*

Իսկ դուք հո՞ս էք։

ԹՈՄԻ

Պատրաստ։

*ՅՈՎՀԱՆՆԷՍ Նէննէլէի։*

Տես նայէ մայրդ։

*Նէննէլէ Յուլիայի սենեակը կ՚երթայ։ Թոմիի։*

Եւ դու բոլոր տունը պտըտէ, տեսնալու համար թէ սենեակները գոցուա՞ծ են։ Եւ շուտ։

*Թոմի կ՚երթայ։*

ՅՈՎՀԱՆՆԷՍ

Պուտա Բեսդ գործերդ լմնցուցի՞ր։

ՄԱՔՍԻՄՈՍ

Շատ լաւ կերպով։ Ձեռնարկութիւնս թողուցի և շահով։

ՅՈՎՀԱՆՆԷՍ

Կը ցաւիմ որ իմ պատճառաւս....

ՄԱՔՍԻՄՈՍ

Աւելի լաւ է մէկհատիկ գործ մը և անով զբաղիլ, քան թէ տասը և մագոգի պէս երթալ գալ։ Դու հոս կարգադրեցի՞ր։ Հեռագիրդ առի։

ՅՈՎՀԱՆՆԷՍ

Պակասորդը ութ հարիւր հազար ֆրանք է։ Կը թողում այս տունս՝ որուն արժէն երեք հարիւր վաթսուն հազար ֆրանք կու տան։ Ախոռը, կառատունը, կոհկարասին, սրահակները և գրքատունը մէջը, հաշուուեցան ութսուն հազար, և հարիւր հազար Բրիանցայի ամարանոցը՝ որ ինծի կէս միլիոնէն աւելի արժած էր։ Պարտատէրները հարիւրին եօթանասուն պիտի առնեն։ Ինծի ոչինչ կը մնայ։ Գիտեմ թէ Լաուրի, որ գլխաւոր պարտապահանջն էր, այնպէս զարմացաւ բարեմտութեանս վրայ, որ զիս, բառ առ բառ, ապուշ անուանեց ատեանին մէջ. և ուրիշ մը, այն ալ բարեկամս, և ինքն ալ հաճ և գոհ պարտապահանջ, զարդարկոտ մը, բոլոր կեանքիս անվհատ աշխատութեանը և նոյնչափ անվճատ լաւութեանս վրայ խօսելով, ըսաւ, թէ՝ անխելք ջորի մըն եմ — այս ալ բառ առ բառ։

ՄԱՔՍԻՄՈՍ

Սպորտական վայելչաբանութիւն։

ՅՈՎՀԱՆՆԷՍ

Տունէն դուրս քաղած պտուղս այս է։ Իսկ տանս մէջ....

ՄԱՔՍԻՄՈՍ

Իրաւ.... քեռայրդ։

ՅՈՎՀԱՆՆԷՍ

Ոհ անոր վրայ չեմ խօսիր։ Քեռայրս, երբոր գործերը կարգի դրուեցան, քոյրս ինծի ղրկեց....

ՄԱՔՍԻՄՈՍ

Հօրաքոյրս իրենէն՝ միտքս կու գայ։

ՅՈՎՀԱՆՆԷՍ

Տասը հազար ֆրանք ինծի բերաւ։

*ՄԱՔՍԻՄՈՍ երեսի ծռմռուքով մը։*

Քանի մը անգամ միլիոնատէր է, կարծեմ։

ՅՈՎՀԱՆՆԷՍ

Կը հաշուեն թէ եօթը միլիոն ունի։

digitised by A.R.A.R.@

ՄԱՔՍԻՄՈՍ

Անշուշտ։ Բնակա՛ն է։

ՅՈՎՀԱՆՆԷՍ

Մի՛ խօսիր, ըրածը շատ է։ Ասկէ զատ, քոյրս երէկ ըսաւ ինծի որ այս առաւօտ պիտի գար Նէննէլէն բարեւելու, որ իրեն սանն է, և այս բանս գիտմամբ մը կ'ըսէր։ Արդէն կը սպասեմ որ իրեն գումար մը պիտի բերէ։

ՄԱՔՍԻՄՈՍ

Քեզի առաջարկած չէ՞ր որ առջի ժամանակներն ընտանիքդ իրեն քովը պահէ։

ՅՈՎՀԱՆՆԷՍ

Այո՛։ Ես գրեթէ ընդունած էի, Սիւիստուն փնտռելու աւելի դիւրութիւն ունենալու համար։ Բայց եոքը....

ՄԱՔՍԻՄՈՍ

Տունը գտնուեցաւ։ Եթէ հաւնիս, կ'իմացուի։ Առաջին օգնականս երէկ ինծի այս բանիս համար հեռագրեց։ Սխիոցի գեղացիներու տնակ մըն է, բայց առենօք բարեկեցիկ մարդիկներու գիւղի տուն եղած էր։ Երկու յարկ, իւրաքանչիւր յարկ վեց սենեակ, քաղաքէն դուրս գեղազուարճ տեղ մը, դիմացը մեծ մարգագետին մը։ Տանտէրը անմիջապէս մօտը ագարակ մը գնեց և հոն գնաց բնակելու։ Օգնականս կէս խօսքը կապած է, տարին վեց հարիւր ֆրանքի։ Գետնայարկը երկու սենեակ ես ինծի պիտի պահեմ, քու աշխատանոցդ հոն դնելու համար, և անոնց համար հարիւր ֆրանք պիտի հատուցանեմ։ Քու պարտականութեանդ կը մնան հինգ հարիւր ֆրանք։ Գործիդ կու գա՞յ։

ՅՈՎՀԱՆՆԷՍ

Խիստ աղէկ։

ՄԱՔՍԻՄՈՍ

Նայէ որ ընտանիքդ հոս թողլու զքեզ համոզելու համար չեմ ըսեր։ Կ'ենթադրուի որ անմիջապէս հետդ ըլլալը քեզի մխիթարութիւն է։

ՅՈՎՀԱՆՆԷՍ

Ոհ աղոր համար չէ։

Դուրսը, յետոյ վշտագին ձայնով։

Գիտես ինչո՞ւ զանոնք հոս չեմ թողուր։ Զեմ վստահիր։

ՄԱՔՍԻՄՈՍ

Որո՞ւն չես վստահիր։

ՅՈՎՀԱՆՆԷՍ

Իմիններուս։ Եթէ գիտնայիր դու թէ կործանումը գալէն եաքը՝ ինչե՛ր տեսայ տանս մէջ։ Կինս անհայնամիտ և թեթեւաբարոյ կ'երեւնայ... քեզի կ՞հ։

ՄԱՔՍԻՄՈՍ

Երբե՛ք չըսի....

ՅՈՎՀԱՆՆԷՍ

Տունը փաստաբան մը բերաւ ինծի, որ զիս համոզէ պարտատէրներուս նենգելու։ Ինծի կ'առաջարկէր կեղծեալ մուրհակներ.... ամարանոցը ուրիշին անցընելուն համար.... կ'ուզէր ծախել այս սրահակները, զարդուկ, և երբոր ըսի իրեն որ այն ատեն խարդախ սնանկութիւն կ'ըլլար, դատաստան.... բանտ, գիտե՞ս թէ ինծի ինչ պատասխանեց։ Պատասխանեց. ժամանակին չեն հասնիր։ Մեկնած կ'ըլլանք։

ՄԱՔՍԻՄՈՍ

Անտարակոյս։

ՅՈՎՀԱՆՆԷՍ

Իսկ զաւակս, ինչ որ Յուլիան կ'առաջարկէր ինծի ընելու՝ համոզուած է որ կատարեր լմնցուցե՛ր եմ։ Ոհ ինքը չի գիտեր և չի չափեր կ'իմացուի, և այն բանին համար ինծի խորհուրդ չէր տար, ապահով եմ. այլ այսպէս վերիվերոյ կը կարծէ թէ մէկ կողմը դրուած ըլլայ գանձը.... և որ մը կը յարմարցնենք։ Ես նախատինքը ինծի չէ որ կ'ընէ։ Իմ ի՞նչ հոգս է։ Այլ սրտին նշանն է.... և գալիքին խոստումը։

ՄԱՔՍԻՄՈՍ

Ապագային համար մենք կանք։

ՅՈՎՀԱՆՆԷՍ

Դու թերեւս.... Սակայն ե՛ս։ Զանոնք կործանեցի։

ՄԱՔՍԻՄՈՍ

Հայրս զիս առանց փողի մը ձգեց տասներորս տարուան, և զինքը կ'օրհնեմ։

ՅՈՎՀԱՆՆԷՍ

Իշխանութիւն չունիմ։ Աշխատութեան եզ մըն եմ, ուրիշ ոչինչ։ Դու չես գիտեր թէ ինչ սուղի նստաւ ինծի այս օրերուս խառապահտնջ ըլլալու ճիգը։ Պիտի չկարենամ դիմանալ։ Երբեք իշխանութիւն չի բանեցուցի։ Կարեւորութիւնը չէի տեսնար։ Այնպէս կը գեղազարդէ հարստութիւնը ամէն բաները։ Գէշ հայր մըն եմ, Մաքսիմոս։

ՄԱՔՍԻՄՈՍ

Զա՛վ օգ, զա՛վ օգ։ Կը տեսնաս։

ԹՈՄԻԻ ՁԱՅՆԸ նախասենեկէն։

Բայց ոչ.... եկէք, եկէք։ Ամէնքն ալ զձեզ տեսնալով հաճոյք պիտի զգան։

ՅՈՎՀԱՆՆԷՍ

Հիմա հրաժարական ողջոյնները։

digitised by A.R.A.R.@

## ՏԵՍԻԼ ՏԱՍՆԸՄԷԿԵՐՈՐԴ

*Վերոյիշեալները, ԹՈՄԻ, ԼԱՒՐԻ տիկինը, յետոյ ՅՈՒԼԻԱ, յետոյ ՆԷՆՆԷԼԷ և ԼՈՒՍԻԱ։*

ԹՈՄԻ

Հայր, Լաւրի տիկինը։

ԼԱՒՐԻ

Բարեւ մը միայն, բարեւ մը միայն։

ՅՈՎՀԱՆՆԷՍ

Շնորհակալ եմ։

*ԹՈՄԻ Յուլիայի գրկան վրայ։*

Մայր, Նէննէլէ։

ԼԱՒՐԻ

Կեմ խօսիր, չեմ խօսիր, վասն զի ինծի շատ ցաւ կու տայ։ Կը կորսնցնեմ իմ լաւագոյն բարեկամներս։ Ի՞նչ սաստիկ տրտմութիւն։ Մեկնողը բաժանումը չիմանար, բայց մնացողնե՛րը։ Ամբողջ գիշերը աչք չի գոցեցի։

*ՅՈՒԼԻԱ կը մտնայ։*

ԼԱՒՐԻ

Յուլիա՛, իմ պա՛նձս։ Երկու վայրկեան միայն քեզ ողջագուրելու ժամանակը։

*Կը գրկէ զինքը։*

ՅՈՒԼԻԱ

Ի՞նչպէս ազնիւ եղար։

ԼԱՒՐԻ

Իսկ Նէննէլէ՞ն։

*ՆԷՆՆԷԼԷ Լուսիայի հետ կը մտնայ։*

ԼԱՒՐԻ

Ահաւասիկ։ Սիրունս։

*Կը գրկէ զինքը։*

Չեմ կարող ըսել թէ ինչ կը կորսնցնեմ։

ԹՈՄԻ

Իսկ ինծի։ Ես ալ կը մեկնիմ։

ԼԱՒՐԻ

Ձեզի ձեռքս։ Մանաւանդ թէ երկու ձեռքերս ալ։

*Թոմի երկուքն ալ կը պագնէ ետեւէ ետեւ։*

*ՅՈՎՀԱՆՆԷՍ տետրանին հակառակ կողմէն, Մաքսիմոսի։*

Նայէ անոնց։ Նայէ կնոջս։ Նայէ որդւոյս։ Կը կարծե՞ս թէ իրենց միճակը հասկնան։ Դուն չես գիտեր, դուն չես գիտեր։

*Նստած է բազմոցին վրայ։ Արմունկները ծունկերուն կռթնցուցած և գլուխը ձեռքերուն մէջ։*

ԼԱՒՐԻ

Կոզզարտէ՞ն կ'անցնիք։

ՅՈՒԼԻԱ

Ոչ։ Մոստանէն։

ԼԱՒՐԻ

Մի՞ղք։ Կոզզարտը շատ նկարագեղ է։

*Նէննէլէի։*

Դուն երբեք Սիւխս գնացա՞ծ ես։

ՆԷՆՆԷԼԷ

Երբեք։

*ՄԱՔՍԻՄՈՍ կը ցնցէ քաղցրութեամբ Յովհաննէսը։*

Սիրտ ըրէ, հօրեղբայր։

ՅՈՎՀԱՆՆԷՍ

Դուն չես գիտեր։ Զիրենք չէի ճանչնար։ Յանցանքը իմս է։ Բայց յաջողութիւնը կը կուրցնէ։ Ո՛հ շնորհքը, վայելչութիւնը, սիրունութիւնը ինչ բան կը ծածկեն։ Մաքսիմոս, տեսնես պիտի։ Զիրենք հո՛ս թողուլ։ Երկդիմի զուարճասիրութեան կեանքի մը պիտի հետեւէին։ Ա՛հ ոչ։ Ինծի հետ, ինծի հետ։ Եթէ սակայն բաւական ըլլայ։

ՄԱՔՍԻՄՈՍ

Ո՛հ ինչ կ'ըսես։

ՅՈՎՀԱՆՆԷՍ

Կը տեսնես։ Անոնք մարդիկներ են որ չեն կրնար փոթորկին դիմակայել։ Երակ չկայ։ Հովին առաջին փչելուն՝ կ'երթան, կ'երթան։

## ՏԵՍԻԼ ՏԱՍՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ

*Վերոյիշեալները, ԱՆԴՐԷԱՍ, յետոյ ԻՐԷՆԷ տիկինը։*

*ԱՆԴՐԷԱՍ Յովհաննէսի։*

Կառքը հոս է։

*ՅՈՎՀԱՆՆԷՍ ոտք ելլալով։*

Մեկնելու ժամն է։

*Մաքսիմոսի։*

Ձեկաւ։

*Ամէնքն ալ ոտքի ելած վերնազգեստները կը հագուին, հովանոցիկներ, գաւազաններ կը փնտռեն։*

ԼԱՒՐԻ

Ձձեզ գտնալու կու գանք։

ԹՈՄԻ

Խոստմունք։ Աքսորականները մխիթարել։

*ԼԱՒՐԻ Յովհաննէսի։*

Ձեզի միայն բան մը կ'ըսեմ. Գնէ՛չ։

ՅՈՒԼԻԱ

Իմ ծաղիկներս։ Ծաղիկներս ո՞ւր են։

*ԼՈՒՍԻԱ կու տայ Նէննէլէի գլխարկը և փռչիապահը։*

ՆԷՆՆԷԼԷ

Բոլորտիքս կը պտըտէիր, խեղճ Լուսիա։

digitised by A.R.A.R.@

ԼՈՒՍԻԱ կ'ուզէ ձեռքը պագնել, լալով ։

ՆԷՆՆԷԼԼԷ

Լուռ կեցիր, լուռ կեցիր ։

ԻՐԵՆԷ կը մօտենայ մայր զանէն ։

Ահ, զեռ զձեզ կը գտնամ,

ՅՈՎՀԱՆՆԷՍ

Քոյրս ։

ԻՐԵՆԷ

Վախ մը ունէի որ ժամանակին չհասնիմ, կրնայի երթալ կայարանը.... բայց կը վախնամ թէ յուզուիմ ։ Ամուսինս հոն պիտի ըլլայ ։ Նէննէլէ ։ Քեզի քիչ մը շոքոլա բերի.... ճամբորդութեան համար ։

ՄԱՔՍԻՄՈՍ

Բայց նայէ մէյմը ։ Ի՞նչ ընծայ ։ Շնորհակալ եղիր, շնորհակալ եղիր հօրաքրոջդ ։ Ապրիս հօրաքոյր ։

ԻՐԵՆԷ ափշած ։

Ո՞վ է ։ Ո՞վ է որ ։

ՅՈՎՀԱՆՆԷՍ

Մեր եղբօրորդին, Մաքսիմոս է ։

ԻՐԵՆԷ

Ահ, մեծցեր ես ։

ՄԱՔՍԻՄՈՍ

Ո՞րչափ ատենէ ի վեր ։

ՅՈՎՀԱՆՆԷՍ

Շուտ ։

ՆԷՆՆԷԼԼԷ

Մնաս բարով, հօրաքոյր ։

ԻՐԵՆԷ

Կու գամ, կու գամ, ձեզի հետ կ'իջնամ ։

ԼԱՈՒՐԻ

Շուտ պիտի դառնաք.... սիրտս կ'ըսէ ինծի ։

Խօսակցելով կ'ելլան մայր դռնէն ։
Յովհաննէս կը նայի իրենց ելլալուն ։

ՄԱՔՍԻՄՈՍ Յովհաննէսին ։

Մի վախնար ։ Նորէն կը սկսիս ։

ՅՈՎՀԱՆՆԷՍ

Յուսանք ։

Ամէնքը կ'երթան ։
Լուսիա միայն կը մնայ և կը նստի թիկնաթոռի մը վրայ հեծկլտալով ։

ՆԷՆՆԷԼԼԷ վազելով կը դառնայ, Լուսիան թեւերուն մէջ կ'առնէ և հազար անգամ կը պագնէ երեսները ։

ԼՈՒՍԻԱ

Նէննէլէ, Նէննէլէ ։

ՆԷՆՆԷԼԼԷ

Լուռ կեցիր, լուռ կեցիր, լուռ կեցիր ։
Կը փախչի ։

Վարագոյրը կ'իջնայ ։

Թարգմ. Հ. ԱՐԻՍՏԱԿԷՍ ՔԱՍԳԱՆՏԻԼԵԱՆ
Շարայարելի

# ՀԱՅԵՑՈՂՈՒԹԻՒՆ Ի ՎԵՐԱՅ ՄԱՀՈՒ

*Thanatopsis* (բնագրին վերնագիրը), կամ Հայեցողութիւն ի վերայ Մահու, Ուիլեըմ Գըլլըն Պրայընթի երկն է և կը համարուի Ամերիկեան բանաստեղծութեանց ամենէն ընտիրներէն մին ։ Պրայընթ (1794–1878) զայն գրեց տասն և ինն տարեկան հասակին, և իւր այս ոտանաւորը առաջինն էր որ Ամերիկացւոց մէջ ճշմարիտ բանաստեղծական հանճարի գոյութիւնը ակնյայտնի երեւան բերաւ ։

Բնութիւնն ունի բազմաղիմի մի բարբառ
Իւր սիրահար այն անհատին որ գիտէ
Հաղորդակցիլ նորա տեսուն ձեւերով ։
Իւր խնդագոյն ժամուց համար նա ունի
Հըրճըւանաց ախորժ մի ձայն, մի ժպիտ
Եւ յորդութիւն գեղեցկութեան ու շնորհաց.
Եւ զգուանօք մի կենսարար ու հեշտին,
Յանգէտս սահի իւր խոկմանց մէջ տխրագոյն,
Որով մեղմէ նոցա տագնապն հիւծական ։
Երբ քու հոգին վերջին ժամուան դառն խորհուրդք
Գամ քան ըզգամ գերէ երեւիլ ճարակեն,
Եւ օրհասին նըսեմ տեսիլք՝ սառ պատանքն
Ու սեւ ծածկոյթ, խաւարն հեղձիկ ու սեղմ (խուցն,
Քեզ սարսռեցնեն, գընա՛ պայծառ երկնի տակ,
Եւ ունկընդիր բնութեան դասուց, մինչ երկրէն
Եւ իւր ջրերէն, և այերաց բարձունքէն,
Գայ մի մրմունջ. Սակաւ մի եւս, և ահա
Իւր համօրէն շրջանին մէջ, ո՛չ եւս զքեզ
Պիտի տեսնէ ամենատես արեգակ.
Ոչ ի հող ցուրտ, ուր դալկահար քո մարմին
Բիւր արտասուօք էր զետեղուած, ոչ ի գոգն
Ովկէանու, քո նմանութիւն պիտ' մընայ ։
Երկիրն որ զքեզ սընոյց՝ պիտ' ետ պահանջէ
Քո աճեցումն՝ դարձեալ լուծել զայն յերկիր,
Եւ կորուսեալ ամենայն հետք մարդկային,
Հրաժարելով գոյութենէն քո ուրոյն,
Պարտիս երթալ և թաղակցիլ ընդ տարերս
Ցըյաւիտեան, ապառաժին զգայազիրկ

digitised by A.R.A.R.@